

ք. Երևան

<<20>> 09

2022թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Աղամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԷՅՍԻ ԷՅՐՓԱՌԻԵՐ ԱՐՄ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 19.04.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/44 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են և կնքված պայմանագրի 3.3 կետը շարադրել հետևյալ կերպ.

- 3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն սույն համաձայնագրի պայմանների /համաձայնագրի 1.2 կետ/, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

1.2 Սահմանված կարգով ընդունված գնման առարկայի դիմաց վճարումը կատարվում է 90 օրվա ընթացքում:

1.3 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 19.04.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն»
ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Աղամյան

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՅՍԻ ԷՅՐՓԱՌԻԵՐ ԱՐՄ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան Առինջ, 2-րդ մկրշ., 1 շ., բն. 8
ՀՎՀՀ 00927779
h/h 1570059095590100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
hayk.khachatryan@acairpower.com

